



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն № 50-Ա

ք. Երևան

<< 27 >> 09 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԿՈԼԵԳԻԱ ՍՏԵՂԾԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի դեկտեմբերի N1527-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության 9-րդ կետով և 15-րդ կետի 32-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարին կից կոլեգիա՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանը հայտարարել Նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին, Նախարարության կառավարման ոլորտի պետական մարմնին, Նախարարության կառավարմանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններին և փակ բաժնետիրական ընկերություններին:

Ա. Երիցյան